թիւններ, ուստի եւ, ինչպէս տեսնուում է Շապուհ Բ.ի Արշակի հետ ունեցած կռուի պատմութիւնից, որ պատահեց Դ. դարու կիսում, Հայաստանի ականաւոր իշխանազուններն՝ ուրացող Մեհրուժանի եւ Արծրունիների միջոցով, եւ Վահան Մամիկոնեանի ձեռքով, ուրացին քրիստոնէութիւնն եւ Հայաստանի երկրների վրայ հրամանատար կարգուեցին Սասանեանց տիրապետութեան ժամանակ։ Առաջինը ստացաւ Վասպուրականը, մի մեծ գաւառ, որ ընկնում է Վանայ լճի հարաւում, մինչ Երասխը եւ Որմիի ծովակի եզերքը՝ Ատրպատականում, երկրորդը՝ դարձաւ զօրապետ կամ հրամանատար Հայաստանի։ Այն ժամանակ քրիստոնէութեան եւ հայ ազգի դէմ ատելութեամբ լցուած Մեհրուժանը՝ Պարսից թագաւորի մի հրամանը հրատարակեց Հայաստանի մէջ, որով արգելում էր կարդալ հայերէն եւ յունարէն լեզուներով գրուած գրքերը. եւ որպէս զի աւելի շուտով իր նպատակին հասնի, նա 381 թուին հրամայեց բոլոր այդ գրքերը հրոյ ճարակ տալ։

"Այդ էր Հայաստանի վիճակը, որն ի նկատի ունի ժամանակակից Ամմիանոսը, երբ նա խօսում է Հայաստանի մեծ մասի, կամ իր խօսքով՝ այն երկրի մասին, որ Մարաստանի դէմ սահման եւ պատուար է, որն Արտաշատի հետ, Յովիանոս կայսեր ամօթալի հաշտութեան շնորհիւ, շուտով ընկաւ Սասանեանց, կամ ինչպէս ինքն ասում է՝ Պարթեւների իշխանութեան ներքոյ (Amm. Marc. XXV. 7, 12). Unde postea contigit, ut vivus caperetur Arsaces, et Armeniae maximum latus Medis conterminans, et Artaxata inter dissensiones et turbamenta raperent Parthi.) Սակայն պէտք է զանազանել այդ բռնութեամբ նուաճուած ամբողջ Հայաստանի մեծ կէսը, այսինքն արեւելեան Հայաստանը, որին պատմագիրները Պարսկա-Հայաստան անունն են տալիս, մի